Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ու Թ Յ Ու Ն

Պետական գույքի կառավարման կոմիտեի Քարտուղարությունում ներգրավված փորձագետ Միեր Հովսեփյանի 2024 թվականի ապրիլի 15-ից մինչև 2024 թվականի հոկտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածի

Պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) գլխավոր քարտուղարի 2024 թվականի ապրիլի 15-ի թիվ 164-Ա հրամանի համաձայն 2024 թվականի ապրիլի 15-ին ընդգրկվել եմ Կոմիտեի քարտուղարությունում որպես փորձագետ:

Համաձայն Կոմիտեի նախագահի 2024 թվականի ապրիլի 3-ի թիվ 117-Ա հրամանով հաստատված հավելվածի 5-րդ կետի՝ ներկայացնում եմ 15.04.2024-15.10.2024թթ. ընկած ժամանակահատվածում իմ կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները՝

- Էլեկտրոնային աճուրդների անցկացման համակարգի (այսուհետ՝ Համակարգ) թերի աշխատանքի ուսումնասիրություն, Համակարգի աշխատանքի խափանումների (ներառյալ՝ ծրագրային և այլ բնույթի թերությունների ու բացթողումների) վերացման (շտկման) նպատակով անհրաժեշտ տեխնիկական աշխատանքների իրականացում,
- Համակարգի միանվագ (սկզբնական) կարգաբերում, Համակարգի ամբողջական փորձարկում և փորձարկման անընդհատության ապահովում,
- E-payments էլեկտրոնային վճարումների համակարգի ինտեգրում և կարգաբերում,
- Անվտանգության SSL սերտեֆիկատի տրամադրում և տեղադրում սերվերի վրա,
- Ղեկավարի կողմից տրված այլ հանձնարարականների իրականացում:

Միաժամանակ հայտնում եմ, որ ներկայումս իրականացվում են էլեկտրոնային աճուրդների հաղթող մասնակիցներին Համակարգի կողմից էլեկտրոնային նամակների ուղարկման կարգաբերման, աճուրդի ժամանակ գնառաջարկների առավելագույն սահմանաչափը հանելու, Համակարգի կողմից նշվող նվազագույն քայլի թվի կարգավորման և այլ թերությունների շտկման ուղղված աշխատանքներ:

Նշված խնդիրները հնարավոր կլինի վերացնել, և գործարկել Համակարգը մինչև սույն թվականի նոյեմբերի 1-ը:

Քարտուղարության փորձագետ
Միեր Հովսեփյան



23.10.2024թ.